STATE PROCUREMENT AGREEMENT FOR HOTEL ROOM RESERVATION AND HOTEL SERVICES N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7 **Yerevan, "06" May, 2026**	**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7** **ք. Երևան** **«06» Մայիս 2026 թ.**
The State Protection Service of the Republic of Armenia, hereinafter referred to as the "Customer", represented by the Head of the State Protection Service of the Republic of Armenia A. Gasparyan, acting on the basis of the Law of the Republic of Armenia "On Ensuring the Security of Persons Subject to Special State Protection" and the Charter of the State Protection Service of the Republic of Armenia, on the one hand, and "Teryan 5" LLC, doing business as Courtyard by Marriott Yerevan Hotel, represented by General Manager Wido Evert Kijne, hereinafter referred to as the "Contractor", on the other hand, jointly referred to as the "Parties", have concluded this Agreement as follows:	«ՀՀ պետական պահպանության ծառայություն»-ը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական պահպանության ծառայության պետ Ա. Գասպարյանի, որը գործում է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տերյան 5» ՍՊԸ-ն, որը գործում է որպես Courtyard by Marriott Yerevan Hotel, ի դեմս գլխավոր կառավարիչ Վիդո Էվերթ Կիջնեի, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, միասին այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.
1. SUBJECT OF THE AGREEMENT 1.1. Under this Agreement, the Contractor undertakes to provide hotel room reservation and hotel services in accordance with the requirements and criteria presented by the Customer, and the Customer undertakes to accept duly provided services and make payment in accordance with this Agreement. 1.2. The reservation and service terms, including the hotel name, address, number of rooms, room type, number of guests, check-in and check-out dates and times, included services, service price, cancellation and modification terms, are defined in Annex N 3 to this Agreement. 1.3. The reservation shall be deemed agreed only upon written confirmation by the Parties.	1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ 1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին և չափանիշներին համապատասխան ապահովել հյուրանոցային համարների ամրագրումը և հյուրանոցային սպասարկման ծառայությունների մատուցումը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված ծառայությունները և կատարել վճարում՝ սույն պայմանագրով սահմանված կարգով: 1.2. Ամրագրման և ծառայությունների մատուցման պայմանները, այդ թվում՝ հյուրանոցի անվանումը, հասցեն, համարների քանակը, համարի տեսակը, հյուրերի քանակը, մուտքի և ելքի ամսաթվերը և ժամերը, ներառված ծառայությունները, ծառայության արժեքը, չեղարկման և փոփոխման պայմանները, սահմանվում են սույն պայմանագրի Հավելված N 3-ով: 1.3. Ամրագրումը համարվում է համաձայնեցված միայն Կողմերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:
2. GENERAL HOTEL RESERVATION CONDITIONS 2.1. Reservations must be guaranteed by a method of payment at the time of booking or by another method agreed in writing by the Parties. 2.2. Check-in time is 15:00 and check-out time is 12:00. 2.3. Reservations may be cancelled 24 hours before the day of arrival without penalty. 2.4. For cancellations made after the cancellation period or in case of no-show, the Customer may be charged a one-night stay for the relevant room. 2.5. At the time of booking and upon check-in, the local hotel terms and conditions shall apply, provided they do not contradict this Agreement and mandatory applicable laws of the Republic of Armenia. 2.6. Guests may be asked to provide proof of identity upon check-in.	2. ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 2.1. Ամրագրումները ամրագրման պահին պետք է երաշխավորվեն վճարման եղանակով կամ Կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ եղանակով: 2.2. Մուտքի ժամն է՝ 15:00, իսկ ելքի ժամը՝ 12:00: 2.3. Ամրագրումները կարող են չեղարկվել ժամանման օրվանից 24 ժամ առաջ՝ առանց տուգանքի: 2.4. Չեղարկման համար սահմանված ժամկետից հետո կատարված չեղարկումների կամ չներկայանալու դեպքում Պատվիրատուից կարող է գանձվել մեկ գիշերվա արժեքը համապատասխան համարի համար: 2.5. Ամրագրման պահին և հյուրերի գրանցման ժամանակ կիրառվում են հյուրանոցի ներքին կանոնները և պայմանները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրին և Հայաստանի Հանրապետության պարտադիր կիրառելի օրենսդրությանը: 2.6. Հյուրերից կարող է պահանջվել անձը հաստատող փաստաթուղթ գրանցման պահին:
3. BILLING PROCEDURES 3.1. Guestroom charges shall be paid by the Customer.	3. ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

3.2. Extra charges not included in the total value of this Agreement shall be the responsibility of the individual traveller, unless otherwise agreed in writing by the Parties. 3.3. Within the framework of this Agreement, all payments shall be made by non-cash method in accordance with the RA Law on Non-Cash Transactions. 3.4. Any payment to be made by the Customer to the Contractor shall be made by non-cash method. 3.5. Payments shall be made after guests' check-out within 5-7 working days upon receipt of the relevant supporting documents. 3.6. Any alternative payment arrangement, including prepayment or third-party payment, shall be agreed in writing prior to the guests' arrival.	3.1. Հյուրասենյակի վճարները վճարվում են Պատվիրատուի կողմից: 3.2. Լրացուցիչ ծախսերը, որոնք ներառված չեն սույն պայմանագրի ընդհանուր արժեքում, կրում է համապատասխան հյուրը, եթե Կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: 3.3. Սույն պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: 3.4. Պատվիրատուի կողմից Կատարողին վճարվելիք ցանկացած վճարում կատարվում է անկանխիկ եղանակով: 3.5. Վճարումները կատարվում են հյուրերի մեկնումից հետո՝ համապատասխան հիմք հանդիսացող փաստաթղթերը ստանալուց հետո 5-7 աշխատանքային օրվա ընթացքում: 3.6. Կանխավճարի, երրորդ անձի վճարման կամ վճարման այլընտրանքային ցանկացած պայման պետք է գրավոր համաձայնեցվի մինչև հյուրերի ժամանումը:
4. AGREEMENT PRICE 4.1. The total value of the services under this Agreement is AMD 1,545,600, including VAT. 4.2. The above rates are non-commissionable and include VAT. 4.3. The detailed price calculation is provided in Annex N 3 to this Agreement.	4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ 4.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 1,545,600 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: 4.2. Վերոնշյալ սակագները առանց միջնորդավճարի են և ներառում են ԱԱՀ: 4.3. Արժեքի մանրամասն հաշվարկը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված N 3-ում:
5. PRIVACY AND PERSONAL DATA 5.1. The Parties shall keep confidential any information obtained during the performance of this Agreement and use such information solely for the purposes of this Agreement. 5.2. Where necessary, the Customer shall ensure that appropriate legal grounds exist for providing guests' personal data. 5.3. The Contractor shall process personal data in accordance with applicable laws and the Hotel's privacy policy. 5.4. The Parties shall not disclose or transfer data received under this Agreement to third parties, except where required by law or necessary for the performance of this Agreement.	5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 5.1. Կողմերը պարտավորվում են պահպանել սույն պայմանագրի կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները և օգտագործել դրանք բացառապես սույն պայմանագրի նպատակներով: 5.2. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն ապահովում է հյուրերի անձնական տվյալների տրամադրման համար անհրաժեշտ իրավական հիմքերի առկայությունը: 5.3. Կատարողը պարտավորվում է մշակել անձնական տվյալները կիրառելի օրենսդրության և հյուրանոցի գաղտնիության քաղաքականության համաձայն: 5.4. Կողմերը պարտավորվում են չհրապարակել և երրորդ անձանց չտրամադրել սույն պայմանագրի շրջանակներում ստացված տվյալները, բացառությամբ օրենքով նախատեսված կամ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դեպքերի:
6. FORCE MAJEURE 6.1. Force Majeure means an exceptional event or circumstance beyond a Party's control, which such Party could not reasonably have foreseen before entering into this Agreement and could not reasonably have avoided or overcome. 6.2. Force Majeure may include war, hostilities, terrorism, civil unrest, strikes, acts of public authorities, epidemics, transportation restrictions, earthquake, flood, fire and other similar extraordinary circumstances. 6.3. If a Party is prevented from performing its obligations due to Force Majeure, it shall notify the other Party in writing within a reasonable period, specifying the obligations affected. 6.4. The affected Party shall be excused from liability for non-performance for as long as the Force Majeure event prevents performance.	6. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ 6.1. Ֆորս մաժոր է համարվում բացառիկ իրադարձությունը կամ հանգամանքը, որը դուրս է Կողմի վերահսկողությունից, որը Կողմը չէր կարող ողջամտորեն կանխատեսել պայմանագիրը կնքելու պահին և որի հետևանքներից չէր կարող խուսափել կամ հաղթահարել: 6.2. Ֆորս մաժոր կարող են համարվել պատերազմը, ռազմական գործողությունները, ահաբեկչությունը, զանգվածային անկարգությունները, գործադուլները, պետական մարմինների ակտերը, համաճարակները, տրանսպորտային սահմանափակումները, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը և այլ նմանատիպ արտակարգ հանգամանքները: 6.3. Ֆորս մաժորի առաջացման դեպքում համապատասխան Կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ նշելով այն պարտավորությունները, որոնց կատարումը կասեցվում է:

6.5. Each Party shall use reasonable efforts to minimize delays and damages caused by Force Majeure. 6.6. If due to Force Majeure the provision of hotel services or use of hotel facilities becomes impossible or illegal, the Parties may terminate this Agreement without liability by written notice.	6.4. Ֆորս մաժորի ազդեցության տակ գտնվող Կողմը ազատվում է պարտավորությունների չկատարման պատասխանատվությունից այնքան ժամանակ, որքան այդ հանգամանքը խոչընդոտում է պարտավորությունների կատարմանը: 6.5. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ձեռնարկել ողջամիտ միջոցներ՝ Ֆորս մաժորի հետևանքով առաջացած ուշացումները և վնասները նվազեցնելու համար: 6.6. Եթե Ֆորս մաժորի հետևանքով հյուրանոցի ծառայությունների մատուցումը կամ հյուրանոցի տարածքների օգտագործումը դառնում է անհնար կամ անօրինական, Կողմերը կարող են լուծել պայմանագիրը՝ առանց պատասխանատվության, գրավոր ծանուցմամբ:
7. ENTIRE AGREEMENT 7.1. This Agreement and its annexes constitute the entire understanding between the Parties with respect to the subject matter hereof. 7.2. Any amendment or modification to this Agreement shall be valid only if agreed in writing by the Parties. 7.3. In case of conflict between the main body of this Agreement and its annexes, the main body shall prevail, unless otherwise agreed in writing by the Parties.	7. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ 7.1. Սույն պայմանագիրը և դրա հավելվածները կազմում են Կողմերի ամբողջական պայմանավորվածությունը պայմանագրի առարկայի վերաբերյալ: 7.2. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները վավեր են միայն Կողմերի կողմից գրավոր համաձայնեցման դեպքում: 7.3. Սույն պայմանագրի հիմնական մասի և հավելվածների միջև հակասության դեպքում գերակայում է պայմանագրի հիմնական մասը, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն համաձայնեցրել:
8. WAIVER 8.1. No failure or delay by either Party in exercising any right under this Agreement shall operate as a waiver of that right. 8.2. Any partial exercise of a right shall not preclude any further exercise of that or any other right.	8. ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՉՕԳՏՎԵԼԸ 8.1. Կողմերից որևէ մեկի կողմից սույն պայմանագրով նախատեսված որևէ իրավունքի չիրականացումը կամ ուշ իրականացումը չի համարվում այդ իրավունքից հրաժարում: 8.2. Որևէ իրավունքի մասնակի իրականացումը չի սահմանափակում այդ կամ այլ իրավունքի հետագա իրականացումը:
9. COUNTERPARTS 9.1. This Agreement may be executed in two or more counterparts, each of which shall have equal legal force. 9.2. Signed copies exchanged electronically may be treated as duly executed copies, unless otherwise agreed in writing by the Parties.	9. ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ 9.1. Սույն պայմանագիրը կարող է ստորագրվել երկու կամ ավելի հավասարազոր օրինակներով, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: 9.2. Էլեկտրոնային եղանակով փոխանակված ստորագրված օրինակները կարող են համարվել պատշաճ ստորագրված օրինակներ, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն համաձայնեցրել:
10. CHANGE OF MANAGEMENT OR OWNERSHIP 10.1. In the event of a change of hotel management or ownership, the Contractor shall notify the Customer in writing within a reasonable period. 10.2. Such change shall not release the Contractor from its obligations under this Agreement, unless otherwise agreed in writing by the Parties.	10. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 10.1. Հյուրանոցի կառավարման կամ սեփականության փոփոխության դեպքում Կատարողը պարտավոր է ողջամիտ ժամկետում գրավոր տեղեկացնել Պատվիրատուին: 10.2. Նման փոփոխությունը չի ազատում Կատարողին սույն պայմանագրով ստանձնած պարտավորություններից, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն համաձայնեցրել:
11. ANTI-CORRUPTION AND SANCTIONS 11.1. The Customer acknowledges that the Contractor, its management company and/or their respective affiliates may be subject to and required to comply with applicable anti-corruption and sanctions laws. 11.2. Such laws may include laws prohibiting the offering, making or receiving of bribes or other improper payments, as well as laws restricting business with certain persons, entities or governments.	11. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 11.1. Պատվիրատուն ընդունում է, որ Կատարողը, վերջինիս կառավարող ընկերությունը և/կամ նրանց համապատասխան մասնաճյուղերը կարող են ենթարկվել և պարտավոր լինել պահպանել հակակոռուպցիոն և պատժամիջոցների վերաբերյալ կիրառելի օրենսդրությունը:

11.3. The Contractor may take actions deemed necessary to ensure compliance with such laws, including termination of this Agreement by written notice without liability, if performance of the Agreement may result in violation of such laws.	11.2. Նշված օրենսդրությունը կարող է ներառել կաշառք առաջարկելը, տալը կամ ստանալը արգելող օրենքներ, ինչպես նաև որոշակի անձանց, կազմակերպությունների կամ կառավարությունների հետ գործարար հարաբերությունները սահմանափակող օրենքներ: 11.3. Կատարողը կարող է ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ նշված օրենսդրությանը համապատասխանությունն ապահովելու համար, այդ թվում՝ սույն պայմանագրի դադարեցում գրավոր ծանուցմամբ և առանց պատասխանատվության, եթե պայմանագրի կատարումը կարող է հանգեցնել նման օրենսդրության խախտման:
12. TERMINATION 12.1. This Agreement may be terminated by mutual written agreement of the Parties. 12.2. Either Party may terminate this Agreement by providing not less than 30 days' written notice to the other Party, provided that such termination does not violate the terms of reservations already agreed in writing and being performed. 12.3. Any amendment or termination of this Agreement shall be made in writing.	12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ 12.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: 12.2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել սույն պայմանագիրը՝ մյուս Կողմին ոչ պակաս, քան 30 օր առաջ գրավոր ծանուցելով, եթե նման լուծումը չի խախտում արդեն գրավոր համաձայնեցված և փաստացի կատարման փուլում գտնվող ամրագրումների պայմանները: 12.3. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լուծում կատարվում է գրավոր ձևով:
13. LANGUAGE 13.1. This Agreement is executed in Armenian and English languages. 13.2. In case of discrepancies or inconsistencies between the Armenian and English texts, the Armenian text shall prevail, unless otherwise required by mandatory applicable law.	13. ԼԵԶՈՒ 13.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: 13.2. Հայերեն և անգլերեն տեքստերի միջև հակասությունների կամ անհամապատասխանությունների դեպքում գերակայում է հայերեն տեքստը, եթե կիրառելի պարտադիր օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
«06» Մայիս 2026 թ. կնքված
N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	98391160/1	Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան հյուրանոցային համարների ամրագրման և հյուրանոցային սպասարկման ծառայությունների մատուցում, ներառյալ՝ հյուրանոցային տարբերակների առաջարկում, համաձայնեցված հյուրանոցային համարների ամրագրում, ամրագրման գրավոր հաստատման տրամադրում, կեցության կազմակերպում և N 3 հավելվածով կամ գրավոր համաձայնությամբ նախատեսված հարակից ծառայություններ	դրամ	1545600	1	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կողմերի կողմից համաձայնեցված ծառայությունների ամբողջական մատուցումը, ըստ յուրաքանչյուր ամրագրման համար սահմանված մուտքի և ելքի ամսաթվերի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ ______ **Ա. Գասպարյան**

ԿԱՏԱՐՈՂ
«Տերյան 5» ՍՊԸ / Քորթյարդ բայ Մարիոթ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 5
Ա[illegible]
Հ/հ [illegible]
ՀՎՀՀ 02245671

Գլխավոր կառավարիչ ______ **Վ. Է. Կիչեն**

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«06» Մայիս 2026 թ. կնքված
N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7
ծածկագրով պայմանագրի

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98391160/1	Հյուրանոցային համարների ամրագրման և հյուրանոցային սպասարկման ծառայություններ	-	-	-	-	1545600	1545600	1545600	1545600	1545600	1545600	1545600	1545600	1545600

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«06» Մայիս 2026 թ. կնքված

N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7 ծածկագրով պայմանագրի

ԱՄՐԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հյուրանոցի անվանումը՝ Courtyard by Marriott Yerevan

Հյուրանոցի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 5

Համարների քանակը՝ 7

Համարի տեսակը / տեսակները՝ Standard Single category

Հյուրերի քանակը՝ 1 անձ յուրաքանչյուր սենյակում

Մուտքի և ելքի ամսաթվերը՝

3 սենյակ՝ 2026 թ. մայիսի 2-ից մինչև 2026 թ. մայիսի 5

1 սենյակ՝ 2026 թ. մայիսի 3-ից մինչև 2026 թ. մայիսի 5

3 սենյակ՝ 2026 թ. մայիսի 3-ից մինչև 2026 թ. մայիսի 4

Մուտքի ժամը՝ 15:00

Ելքի ժամը՝ 12:00

Ներառված ծառայությունները՝ գիշերակաց

Նախաճաշը ներառված չէ:

Մեկ օրվա արժեքը՝ 110,400 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր սենյակի համար

Արժեքի հաշվարկը՝

3 սենյակ x 3 գիշեր x 110,400 ՀՀ դրամ = 993,600 ՀՀ դրամ

1 սենյակ x 2 գիշեր x 110,400 ՀՀ դրամ = 220,800 ՀՀ դրամ

3 սենյակ x 1 գիշեր x 110,400 ՀՀ դրամ = 331,200 ՀՀ դրամ

Ընդհանուր արժեքը՝ 1,545,600 ՀՀ դրամ

Կանխավճար՝ կիրառելի չէ

Կիրառված զեղչեր՝ հատուկ կորպորատիվ սակագին: Վերոնշյալ սակագները առանց միջնորդավճարի են և ներառում են ԱԱՀ:

Վճարման կարգը՝ վճարումը կատարվում է հյուրերի մեկնումից հետո՝ համապատասխան հիմք հանդիսացող փաստաթղթերը ստանալուց հետո 5-7 աշխատանքային օրվա ընթացքում, անկանխիկ եղանակով:

Անվճար չեղարկման վերջնաժամկետը՝ ժամանումից 24 ժամ առաջ

Ուշ չեղարկման դեպքում կիրառվող վճարը՝ մեկ գիշերվա արժեքը համապատասխան չեղարկված համարի համար

Չներկայանալու դեպքում կիրառվող վճարը՝ մեկ գիշերվա արժեքը համապատասխան համարի համար

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ Ա. Գևորգյան

ԿԱՏԱՐՈՂ
«Տերյան 5» ՍՊԸ / Քորթյարդ բայ Մարիոթ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 5
Արդշինբանկ
Հ/հ 2470094225250000
ՀՎՀՀ 02245671

Գլխավոր կառավարիչ Վ. Ե. Կիջեն

Փոփոխության պայմանները՝ փոփոխությունները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ հյուրանոցի հասանելիության և գործող պայմանների համաձայն:

Հատուկ պայմաններ՝ ամրագրման պահին և հյուրերի գրանցման ժամանակ կիրառվում են հյուրանոցի ներքին կանոնները և պայմանները: Հյուրերից կարող է պահանջվել անձը հաստատող փաստաթուղթ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ՀՀ պետական պահպանության ծառայություն** **ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20** **ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/հ 900011004497** **ՀՎՀՀ 00006796**	**ԿԱՏԱՐՈՂ** **«Տերյան 5» ՍՊԸ / Քորթյարդ բայ Մարիոթ** **Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 5** Արդշինբանկ Հ/հ 2470094225250000 ՀՎՀՀ 02245671
Պետ՝ Ա. Գասպարյան	Գլխավոր կառավարիչ՝ Պ. Է. Կիջնե

ՀԱՎԵԼՎԱԾ N 4

«_» _____ 20 թ. կնքված
N _____ ծածկագրով պայմանագրի

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ք. _____ «_» _____ 20 թ.

Սույնով «_____»-ը, ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, և «_____»-ը, ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ Կատարող, արձանագրում են, որ N _____ «» _____ 20 թ. պայմանագրի շրջանակում Կատարողի կողմից մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

հ/հ	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	_____	_____	_____	_____	_____
2	_____	_____	_____	_____	_____
3	_____	_____	_____	_____	_____

Ընդհանուր արժեքը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ:

Պատվիրատուն հաստատում է, որ վերոնշյալ ծառայությունները՝

□ մատուցվել են պատշաճ և ամբողջությամբ,

կամ

□ մատուցվել են հետևյալ վերապահումներով՝ _____

Սույն արձանագրությունը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

ANNEX No. 1
to the Agreement concluded on
"06" May 2026
under code N ՊՊԾ-ՍԱՀԶԲ-2026/4237-7

TECHNICAL SPECIFICATION – PROCUREMENT SCHEDULE

Service							
Lot No. per invitation	Cross-reference code per procurement plan (CPV classification)	Technical specification	Unit of measurement	Total price / AMD	Total quantity	Delivery address	Delivery deadline
1	98391160/1	Provision of hotel room reservation and hotel services in accordance with the requirements presented by the Customer, including: offering hotel options, confirming reservations in writing, arranging accommodation and related services as specified in Annex 3 or by written agreement	AMD	1,545,600	1	RA, Yerevan, Kentron, Teryan 5	From the date of entry into force of the Agreement until full provision of services agreed by the Parties, per check-in and check-out dates of each reservation

CUSTOMER	CONTRACTOR
State Protection Service of the Republic of Armenia Yerevan, 1st dead-end lane of Proshyan str. 20 Operational Department of the Staff of the RA Ministry of Finance Account No. 900011004497 TIN 00006796	"Teryan 5" LLC / Courtyard by Marriott Address: RA, Yerevan, Kentron, Teryan 5 Ardshinbank Account No. 2470094225250000 TIN 02245671
Head: A. Gasparyan	General Manager: W. E. Kijne

ANNEX No. 2
to the Agreement concluded on
"06"May 2026
under code N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7

PAYMENT SCHEDULE

Service			Payments planned for 2026 by month, including												
Lot No.	CPV Code	Name	January	February	March	April	May	June	July	August	September	October	November	December	Total
1	98391160/1	Hotel room reservation and hotel services	-	-	-	-	1,545,600	1,545,600	1,545,600	1,545,600	1,545,600	1,545,600	1,545,600	1,545,600	1,545,600

CUSTOMER	CONTRACTOR
State Protection Service of the Republic of Armenia Yerevan, 1st dead-end lane of Proshyan str. 20 Operational Department of the Staff of the RA Ministry of Finance Account No. 900011004497 TIN 00006796	"Teryan 5" LLC / Courtyard by Marriott Address: RA, Yerevan, Kentron, Teryan 5 Ardshinbank Account No. [redacted]250000 TIN 02245671
Head: A. Gasparyan	General Manager: W. E. Kijne

ANNEX No. 3
to the Agreement concluded on
"06"May 2026
under code N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7

RESERVATION TERMS

Hotel name: Courtyard by Marriott Yerevan
Hotel address: RA, Yerevan, Kentron, Teryan 5
Number of rooms: 7
Room type(s): Standard Single category
Number of guests: 1 person per room
Check-in and check-out dates:
3 rooms: from 2 May 2026 to 5 May 2026
1 room: from 3 May 2026 to 5 May 2026
3 rooms: from 3 May 2026 to 4 May 2026
Check-in time: 15:00
Check-out time: 12:00
Included services: accommodation
Breakfast is not included.
Daily rate: AMD 110,400 per room
Price calculation:
3 rooms x 3 nights x AMD 110,400 = AMD 993,600
1 room x 2 nights x AMD 110,400 = AMD 220,800
3 rooms x 1 night x AMD 110,400 = AMD 331,200
Total value: AMD 1,545,600
Prepayment: not applicable
Discounts applied: special corporate rate. The above rates are non-commissionable and include VAT.
Payment terms: payment shall be made within 5-7 working days after guests' check-out upon receipt of supporting documents, by non-cash method.
Free cancellation deadline: 24 hours before arrival
Late cancellation fee: one-night rate for the relevant cancelled room
No-show fee: one-night rate for the relevant room
Modification terms: modifications are made by written agreement of the Parties, subject to hotel availability and applicable conditions.
Special conditions: hotel's internal rules and conditions apply at the time of booking and check-in. Guests may be required to present proof of identity.

CUSTOMER	CONTRACTOR
State Protection Service of the Republic of Armenia Yerevan, 1st dead-end lane of Proshyan str. 20 Operational Department of the Staff of the RA Ministry of Finance Account No. 900011004497 TIN 00006796	"Teryan 5" LLC / Courtyard by Marriott Address: RA, Yerevan, Kentron, Teryan 5 Ardshinbank Account No. 2470094225250000 TIN 02245671
Head: A. Gasparyan	General Manager: W. E. Kijne

ANNEX No. 4

to the Agreement concluded on
"_" _____ 20__
under code N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-7

SERVICE DELIVERY AND ACCEPTANCE CERTIFICATE No. ____

City of _____ "_" _____ 20__

This Certificate confirms that "_____", represented by _____, acting on the basis of _____, hereinafter the "Customer", and "_____", represented by _____, acting on the basis of _____, hereinafter the "Contractor", hereby acknowledge that under Agreement No. _____ dated "_" _____ 20__, the Contractor has provided the following services:

No.	Service Name	Unit of Measurement	Quantity	Unit Price	Total Value
1					
2					
3					

Total value: _____ (_____) AMD.

The Customer confirms that the above services have been:

[ ] provided properly and in full,

or

[ ] provided with the following reservations: _____

This Certificate is made in 2 (two) copies of equal legal force, one copy for each Party.

CUSTOMER	CONTRACTOR
---	---
(signature) Seal	(signature) Seal